## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2017թ-ի հունվարի 18-ին կնքված ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի ապրիլի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 10.04.2017թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար 2017 թվականի ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

## Համաձայնագիր-2
## 18.01.17թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** « 10 » ապրիլի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գ.Գրիգորյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18.01.17թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել 2017 թվականի ՀՀ կառավարռթյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի արտաբյուջետային միջոցների հաշվին ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Պատվիրատու**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
**Ա.Սահակյան**
__________________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**

«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ
ք.Երևան,Հյուսիսային պողոտա 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի գործադիր տնօրեն՝
**Գ.Գրիգորյան**
__________________
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«18» հունվարի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը | **Ընդամենը Տարի** |
| Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) ծառայություններ | 4215 | | | 10 115 000 | 10 115 000 | 10 115 000 | 10 115 000 | 10 115 000 | 10 115 000 | 10 115 000 | 10 115 000 | 10 115 000 | **10 115 000** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
**Ա.Սահակյան**
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ
ք.Երևան,Հյուսիսային պողոտա 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի
գործադիր տնօրեն՝
**Գ.Գրիգորյան**
(ստորագրություն)
Կ.Տ